



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 5

— Տ Ե Ր Ա Ր —

29 ՅՈՒՆՎԱՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՈՒՈՒՍՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՄԱՐ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Յր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՍԵՐ ՎԱԺԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

27

Կ. Պոլիս, ձեռագիր Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն բերել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրիշ եղանակով յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գրեացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասր 40 փարա

ԱՐՏՈՂԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(صاريان) مطبعه — باب عالی جاده سی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ

Կ. Պոլիս Պապը-Աղի ճաշատան քիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին

մեքենան լաւագոյն է. աոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ ղիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

- | | |
|----------|--|
| ԲՆԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ: |
| ԿԱԼԱՏԱՐԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ: |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԱԿԻՏԱՐ | Չորշը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղսֆներու մեջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզդուլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕԲԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՍԻՄ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՂ

ՀԻՊԵՂԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ճրանգ

17,000,000 Ճրանգ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգենաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեանց դրամատունն է Քրիստի Լիօնէ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Հաճօրուլօ խան, թիւ 52, 53, 54, 55, 56:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիւրագոր Գերկայացուցիչ

Գ. ՖԵՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ս 5

ՇԱԲԱԹ

29 Յունուար 1905

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Խորհակուած Կեանք մը (Առաջնորդող Յօդուած). — ԱՆԴՐԱՆԻԿ ՆՍԱՅԵԱՆ: Խղմը-
սանք (Բանաս.). — Օ. ՔԱՄԵԼԻԱ: Զեմիք ու Նասիւր (Մեր Պատանիները). — ՌՕՄԱՆ:
Դաւեանկը (Ոստանաւոր). — Դ. ՆՍԱՅԵԱՆ: Երիտասարդներու եւ երիտասարդուհիներու քիւր
մէկ համոզումը: — Ս. ԲԱՐՍԵՂՆԵԱՆ: Հռենոսի Զրկեմները (Թարգմ.). — ՄԻՔԱՅԷԼ
ՆԱԼՊԱՆՏԵԱՆ: Բերրողական Սեր (Գրքաբախտուն Ոստանաւոր). — ՍԱՂԱԹԻԷԼ: Դիտա-
կան Խաղեր (Մամ-Ծաղիկ). — Զ. Մ.: Օրօհեղ. — ՄԵՂՐԻԿ: Գրական Դեմքեր (Փանթեզի).
— ԷՍ-ՍԷ: Զուարթ Ժամեր (Թե՛ք մի չի՛թք). — Զ. Մ.: Գնդասեղը եւ Կիները (Օրուան
Նիւթ). — ԼԻԼԱ: Մօտե՛ն եւ. — ՌԱՏԻՈՆԷՆԷ: Հոգեկան Տառապանքը (Գեղօք). — ՄԱՆՆԻՈՆ:
Ծաղիկները (Ոստանաւոր). — Տ. ՄԱՎԵԱՆ: Լուրերու Բաժին. — ԼՐԱԳՈՂ ԶԱՅՆԱԽՈՐԵԱՆ:

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ԿԵԱՆՔ ՄԸ

Հաստատուած ճշմարտութիւն մըն է թէ՛ մեր կարեւոր հաստատութիւններու
վարչութիւնն ու զեկը ստանձնողներուն մէջ կը գտնուին երբեմն այնպիսի անձեր,
որոնք տառնկ փափուկ ու բազմապատկան զաշտօն մը կատարելու բոլորովին ան-
յարմար են, փափկանկատութիւն, հեռատեսութիւն չունենալով: Այս պատճառաւ,
անոնք, անանկ սխալ որոշումներ ու դատաստաններ կ'ընեն երբեմն, որոնց հե-
տեւանքը՝ անդամանելի կորուստ մը և ցաւալի պատահար մը կ'ըլլայ: Ասոնք՝
զաշտօնի գլուխ անցած օրերնին, իրենց շուրջը կը տեսնեն սինյքոր հացկատակ-
ներու վնասակ մը՝ որոնք իրենց անձնական շահերը ապահով հիմերու վրայ դը-
նելու համար, կը սկսին զանազան սուտ ամբաստանութիւններ յերիւրել պատ-
ւաւորապէս ապրողներու անուան շուրջ, որոնք իրենց կարգին՝ զոհերը կը վան-
անոնց: Այս ըսածներս հաստատելու օրինակներ չեն պակսիր, ու այսօր ցա-
ւալի ու սրտաճմիկ իրողութեան մը հանդէպ գտնուելու դժբաղդութիւնը ունե-
նալս է որ, այս տողերը մրոտել կը ստիպէ զիս:

Ս. Յակոբայ Որբանոցին նախկին չըջանաւարտներէն Մկրտիչ անուն տասնը ութը տարեկան պատանին, որ չըջանաւարտ ըլլալէ վերջ, Հիւանդանոցի մէջ կը պատասպարուէր, մէկ երկու տարիէ ի վեր պաշտօն մը կը վարէր հոն խղճմտօրէն, չնչին գումարի մը փոխարէն: Վերջերս անտեղի պատճառաբանութիւններով, այդ պաշտօնէն զրկուելէ զատ, չեմ գիտեր ո՛րոնք, գիշերանց կը ստիպեն զինքը Հիւանդանոցէն մեկնիլ, առարկելով թէ Ազգը այլեւս զինքը չկրնար պահել, ու հետեւաբար պէտք է որ ա՛յդ ժամէն իսկ, ինք իր գլխուն ճարը նայի:

Տղան գիշերանց Հիւանդանոցէն կը մեկնի, ու աննպատակ քայլերը կ'ուղղէ դէպ ի Սամաթիա: Ճամբան «մէր երթամ և ի՛նչպէս ապրուիմ» ի յուսահատ մտածումներ կը պաշարեն իր մատաղ միտքը, ու կեանքի դառնութեան հեռապատկերը կը սարսափեցնէ զինք: Գրպանէն ծիախտ հանելով կը սկսի ծամելով կուլ տալ, որպէս զի անոր թմրեցուցիչ ազդեցութենէն գինոջնայ և իսպառ չվհատի կեանքէն: Կէս գիշերուան մօտ ծանօթի մը տունը կ'երթայ հոն գիշերելու: Յաջորդ օրը ծանօթ բարեսէր տիկնոջ մը կը դիմէ, որպէսզի իրեն գործ մը հայթայթէ: Տիկինն ալ կ'ըսէ իրեն «Հոգաբարձութեան անդամներէն մին (անունը տալով) որ ցարգ քու ջերմ պաշտպանդ ըլլալ կը թուէր՝ քեզ նկատմամբ խիստ աննպատակ յայտնութիւններ ըրած է ինձ...»:

Բնականէն զգայուն ու ազնիւ տղան՝ այս խօսքերէն խորապէս ըզգածուած ու յուսահատած՝ տուն կ'երթայ ու կը սկսի խոկալ: Կեանքի պայքարը խիստ ծանր ու անտանելի կը թուի իրեն, որովհետեւ օգնական ու ապաւէն՝ ոչ ոք ունի: Տխուր մտածումներով երկար ժամեր օրօրուելէ վերջ՝ իրեն տրուած այս հարուածը չկրնար մարսել, երբ մանաւանդ կը տեսնէ թէ, մարդիկ կը խաղան իր ոյատուաւոր անցեալին ու իր մաքուր բարոյականին հետ: Մտային դիմայեղումի մը կ'ենթարկուի, ու կ'ապաստանի խըրճիթի մը մէջ: Հիմա նոյն այդ խրճիթին մէկ անկիւնը խշտեակի մը վրայ պառկած է ան՝ բոլորովին գէշ վիճակի մէջ: Յիշողութիւնը դեռ տեղն է սակայն:

Այս տարաբաղդ Մկրտիչը, որուն անխնամ վիճակը արգահատանքի ու կարեկցութեան խոր բաժին մը ունենալու իրաւունքը ունի մեր ամենուս սրտին մէջ, զինքը այս ողբալի ու սրտաճմլիկ վիճակին ենթարկողներուն դէմ ալ օրինաւոր հատուցում պահանջելու իրաւունքը պէտք է տայ անշուշտ մեզ, քանի որ վաղուց՝ ի հօրէ ուր, գաւառէն Պոլիս եկած տղայ մըն էր ան, որ իր պատուաւոր ու ազնիւ բնաւորութեամբը ամենուն սէրն ու վստահութիւնը գրաւած և հիմա, կարգ մը անխիղճ և սինքոր հացկատակներու յերկրանքներուն դժբաղդ զո՛հը եղած էր: Յաւալի է որ, այսպէս, անհեռա տես ու անսկզբունք, ասոր անոր ըսածի՛ն միայն որոշում տուողներու կ'ենթարկուի որք մը, մինչդեռ այդ անսիրտ, անխիղճ անձերը՝ կը ստիպեն որ մայրը հաստատութեան մէջ հիւանդապահի պաշտօնը շարունակէ դեռ, հոգ չէ թէ

իր զաւակը անխնամ՝ խրճիթի մը անկիւնը հեծէ՝ ու զառանցէ՝

Արդարութիւնը կը պահանջէ, նոյն՝ տղուն՝ բժշկական խնամքի տակ առնելով, ապաքինման աշխատիլը, ու ապա հաստուցումը իր կրած զրկանքներուն, կեդրոնական վարչութեան և Սրբազան Պատրիարք Հօր խորին ուշադրութեան և նկատառութեան կը յանձնենք այս սողերը։ (*)

ԱՆԴՐԱՆԻ ԵՍՍՏԱՆ

(*) Ծ. Խ. — Յարգելի յօգուածագրին այս արուար յայտնութիւնները, որոնք ամէն զգայուն սիրտ փղձկեցնելու ընդմէջ ունին, անգամ մը եւս կուգան հաստատել թէ մեր բարեգործական հաստատութիւններու մէջ, տակաւին մուտ չէ գտած դժբաղդաբար արդարադատ և անաչառ ոգին, և նոյն այդ հաստատութիւններուն մէջ պաշտօնավարող անձերու ի նպատակ և աննպատակ արուած որոշումները անձնական համոզումներու արդիւնք չըլլալէ զատ, անոնց մէջ խարխիւ նկատուած կարգ մը պորտաբոյծներու յերկրանքներուն արդիւնքներն են, ինչ որ բաւական մտածել կուտայ ողջամիտ անձերուն։

Խորտակուած տղուն կիանքը՝ ծանօթ մեզի՝ քննադատելի երեւցեր է, ինչպէս լսեցինք, նոյն այդ հաստատութեան մէջ, անոր համար միայն որ, այդ որբ պատանին չի կրնալով հանդուրժել հաստատութեան մէջ եղած զեղծումներուն, որոնց առաջը կրցաւ առնել մասամբ՝ հաստատութեան տրդի ժրջան Տնօրէնը, աններելի մեղքը գործեր է կարգ մը տեղեկութիւններ ղուրս հանել։ Երկրորդ որ՝ այդ տղան մաքուր կը հագուէ եղեր, ցերեկները ճաշարան կ'երթայ եղեր, գիշուն մազերը միշտ սանտրուած են եղեր, և դեռ կա՛րգ մը եղերներ որոնք դատապարտելի՛ ըրեր են խեղճ տղան, և արժանի պաշտօնականութեան։

Եթէ այս պարագաները պատճառներ կրնան ըլլալ որբ տղու մը դժբաղդութեան, կը զարմանանք որ կարգ մը անխիղճ պորտաբոյծներու հանդէպ ինչպէս անտարբեր մնալ կ'ուզուի։

Ո՛րքան երջանիկ մարդիկ են ուրեմն ա՛յն պաշտօնեաները, որոնք այնքան մաքուր չեն հագուիր և . . . ճաշարանէն չէ՛ որ կուտեն, դատապարտելի չըլլալու համար։

ԿՈՒՅՍՏԱՆ

Պահ մը անո՛յլ . . . : Հրայրքներով բոցեղին՝
Ու հեշտանքի գինովութեամբն ըզգիսած,
Գիրկընդխառն, պիւրկ՝ սխաւած էինք յուրթեն
Եւ մեկգիւնէ բռնուց ըղձանքով մը պաշտած։

Բայց հրապոյրի րոպէները շո՛ւտ քրոսան,
Սերը՝ աւա՛ղ, բոյրի մը պէս ցընդեցաւ,
Ու սառեցաւ սիրտըս ձիւնի պէս ձմրան,
Արդ կ'զգամ թէ զինքը կ'ատեն աւ. տակաւ։

Զիս սիրելուն համար անշուշտ կաթոգին՝
Ու խանդակաբ, վեհ սիրով մը աղջեկան,
Ատած էի զինքը՝ անփոյթ ու լըռիւն,
Խռովքներու ենթարկած գայն հոգեկան . . . :

Ակնարկով մը ինձի ներեց անիկա՝
Երբ օր մ'իրար հանդիպեցանք վշտահար,
Ո՛հ, ներե՛ց ինձ, ակնարկներովն իր հըսկայ,
Այլ կուրծքիս տակ ինձի տանջող խի՛ղճ մը կար։
Օ. ԲԱՄԵԼԻԱՆ

ԶԵՆԻԹ ՈՒ ՆԱՏԻՐ

(ՄԵՐ ՊԱՏԱՆԵՐԸ)

ԲԱՆԱԳՈՂԻՆ

Անհաշուելի թիւ մը ունին անոնք, կազմուածքի առոյգ ու վառ անձնաւորութիւններ. եռանդի իրապէս հմայող պատկերացումն հսկայ տարրը. ամէն քայլափոխիդ կը գըտնես, կը տեսնես ու կը հանդիպիս անոնց:

Մեր մտաւորականի լայնածիր դաշտին կուռ սերմերը՝ որոնց պիտի պարտինք վաղուան կրթական կեանքերնս, գալիք սերունդներուն ու բազմազան ասպարէզներուն օրուան ներկայացուցիչները սեպելով զիրենք, իրենց անձին վրայ կեդրոնացնելով մեր կրթական բոլոր ակնկալութիւնները:

Ամէն կեանքի, ամէն խաւերու, ամէն ասպարէզի մէջ մէկ մէկ կայուն հիմեր, որոնք վաղուան կեանքի էջերուն մէջ պիտի երթան արձանազրեւ օրուան համայնքին յարատեւ աշխատասիրութիւնները և որոնք գրեթէ հաւասար բաժինը ունին պատուաւոր քաղաքացիի մը վերապահուած այն տաք վերաբերումէն, զոր կը յօժարինք միշտ յարգանքի նիշերով արտայայտել, արդար նախապատուութեան ամէն կարելի արտայայտութիւններով:

Որքան հրապարակի մարդ, նոյնքան և աւելի ընտանեկան ներքին բարքերու կազմաւորութեանը մէջ, խոհուն ու զարգացած այդ երիտասարդները, իբր պատուաբեր ներկայացուցիչներ ընդունելով, առջի օրէն իսկ անոնց ձգած ենք ազնուացումը՝ նըպաստաւորումը՝ մեր անունին և ընտանեկան ու ընկերական զիրքին, իր շատ մը բացարձակ ու ակնհերեւ առաւելութիւններով:

Ու այս բոլոր ձիրքերուն մասնաւորուած օժտումովը, անոնք կը ներկայանան միշտ, իրենց պատկանած լեզուին, կրօնքին, ինչպէս նաեւ հոգեկան Եսին բարձրացման աստիճաններուն հանդէպ:

Եւ այսպէս, երբ պահ մը կ'երթանք, մտովին խառնուիլ իրենց, կը սիրենք մտա-

ծել թէ, ո' եւ է առիթ մը չկրնար կասեցընել մեզ, իրենց նկատմամբ ունեցած մեր անկեղծ համակրանքէն, երբ միշտ լուրջ արժանիքի մը տէրը դարձած են:

* * *

Աղտոտ սրճարանի մը դարչելի մթնոլորտին տակ, քովիտի ձգուող պատառաւուն բազկաթոռի մը մէջ թուլօրէն ընկող մանած, սիկառի յորդ մուկ մը կը փայթ քեցընէր բերնէն, օդին մէջ առկախուող այդ փոքրիկ ամպիկներուն մէջէն, կարծես, իր անառակ սէրերը ու ցնորքները կարդացողի մը երեւոյթովը:

Նայուածքս իր վրայ նետած կը մտածէի հոգ, իր ողորմելի կեանքին վրայ, մինչդեռ ինք լիաթոք կը շնչէր մուկի թանձր կայլակները, դէմքի անանկ գոհունակ ժպիտով մը որ, մարդ իրաւցընէ պիտի ուզէր այդ անիմաստ ու խօլ եռանդովը շնչել իրեն պէս, հեշտագրող ու վիսաւարեր այդ վայելքէն զինովեալու տենչով, առանց երբէք անորմէն գալիք տիրուր հետեւանքը մտաբերելու:

Ցնցոտիներու գունաթափ ամբողջութիւնը հազիւ նշմարել կուտային իր վտիտ մարմինին ձեւը, և արդէն մէկ նայուածքով, կարելի էր չտեսնել, լոկ ոսկորներու ազագուն այդ կոյտը, լայնկեկ հագուստներուն մէջ պարտկուած:

Ապրելիք կեանքը... Ծոյլի մը կեանքը ազահովարար, մգլտած գաղափարներու, սին ու աղտոտ բաղձանքներու մէջ մոլորուն, միշտ անգիտակից գերի մը, հետըզհետէ լքող ու հիւժող իր մեղկութիւններուն մէջ թակարդուած: Երիտասարդի տարիքին էն վառ հանգրուանին մօտ, բուրրովին յափշտակուած ապուշ հմայքներու ցնորեցնող պարուրանքներէն, տխուր կեանքի մը պատկերը, իր վրայ գծուած էր:

Որչափ որ կրցեր էի իր մասին դադափար մը կազմած ըլլալ, կը յիշեմ թէ, կիսկատար մնացող դպրոցական անհիմն չըջան մը հազիւ ձեւք ձգած, իր վրայ ծանրացող զաւկի բարոյական պարտականութիւններէն կամովին թօթուելով, դայեր էր նետուիլ կեանքերուն ամէնէն ինկած ցանցին մէջ, մոռնալով իսկ ծնողքը, բարեկամները ու

աղբակներն էր, իսկ ուրիշ հեռանալով իր տանը օճախէն :

Թոյլ ու ծոյլ կեանք մը վերսկսեր էր ինք, աներկաւ կայելի ամէնէն մութ բարձրորուն մէջ, լկանքի գեղանաքարչ դիրքով մը, մոռցուելով վերջնապէս :

Իր զղջումը սակայն, պիտի չուշանայ երբէք, այդ զեղիս ու լղրճուած կեանքէն յափրացած, պիտի չ'նայ օր մը վերականգնիլ նորէն, բայց մեղք որ փառացնող իր կեանքին անլրիպելի հարուածը չառ խորունկ կերպով պիտի ջլատէ զինքը, և անառակ իր կեանքին խորունկացած բարոյականի աղաք, երբէք պիտի չ'լրնայ անհետացնել իր ճակտին ակօսացումներէն, որքան ալ ջանք դնէ այդ մօտին անհետացմանը, իր մնացող օրերուն մէջ և որքան ալ հոգատար ըլլայ իր ֆիզիքական բարեօրոյմին :

Իսկ ներկայն . . . Հարկ չկայ պարզել, ամէնուն զիտցածն է :

Պիտի սլքտայ ան օրն ի բուն, կեանքի մութ խաւերուն մէջ ինկած երիտասարդը՝ անարգուած դէմքը՝ միշտ նոյն դասալիք անդամը ներկայանալով մեզի, կրթուած ընկերականութեան մը առաջնորդող գեղեցիկ հակումներուն ու պահանջումներուն հանդէպ :

ԹՕՄԱՆ

ՊԱՇՏՆԱԿԸ

Ա. ՆՍԱՅԵԱՆԻՆ

Մտերու պէս ցաւագին,
Ստեղծեր դաւնակին,
Հեծկըսուցներ լալագին՝
Լուռ կը պահեն մեջերսին :

Ոսկրու մասները եբ սակայն,
Հսկիւ անձն կը հրպին՝
Լացեր դուղո՞ջ ու երկայն՝
Կ'աւճագա՞ցեն բաղձագին :

Մասներուն սալ տալու կին՝
Կակիներովն իր կրկին,
Սիրս ալ՝ դաւնակն է կոտրած
Որ յաւ կուլայ՝ անբնաց՝
— Մասներուն սալ տալու կին :

Բերա

Գ. ՆՍԱՅԵԱՆ

ԱԶԳԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ, շփուիլ եւ ադամանդներով
զարդարուիլ, ինչպէս նաեւ սան կա-
ւասիներ կոկել ամէն կերպով, առանց
հասկնիդ պարպելու

Ա. Յ. Լ.

Ա. ՊԱՌԻԿ

Մայր ես, աղջկանց օժիտը կը մտածես՝ դիմէ . . .
Օրիորդ ես, շիք և աժան հագուիլ կուզես՝ դիմէ . . .
Երիտասարդ ես շիքը կը սիրես՝ դիմէ . . .
Տարեց ես և ցուրտէն պատապարտւի՞ր կուզես՝ դիմէ . . .
Տղոքներ ունիս, որոնց պիտոյք զանկէ կը ճանձնես՝ դիմէ
Անուանացու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ
Եկա՞ք կապանդ է, նուէրներ գնել կը փախաքիս՝ դիմէ . . .
Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ
Ձեռքդ պարտաւ ճամբայ քալելը չե՞ս սիրեր՝ դիմէ . . .
Կուզե՞ս տունդ կոկել ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ . . .
Առանձնակարգ և տոկուն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ
Կուզես շիք, ճաշակաւոր և լուս տեսակ փողկապներ ու-
նենալ՝ վերջապէս կուզե՞ս՝ ոտից ցլուխ հագուիլ, շքուիլ,
պծուիլ

դիմէ միմիայն

«ՀԷՐՃԱՅԻ» ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, ԳՈՐԾՈՒՄԸ ԼԱՐ ՓՈՂՈՅ ԹԻՒ 13
ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի,
ճերմակեղէնի, ֆանթէզիի, աղամանդի,
ժամացոյցներու, շղթաներու և ամէն տեսակ
կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւ-
րին 20 կանխիկ և մնացեալ գումարին հա-
րիւրին 5ը շաբաթական վճարմամբ .
2. Կանխիկ գնողներու համար հարիւրին
5 զեղչ .
3. Կանխիկ ծախուած ապրանքներէն մի-
միայն աղամանդեայ գոհարեղէնները երբ
գործածուած բայց անվնաս մնացած ըլլան,
հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախ-
ուած և անվնաս մնացած միմիայն աղաման-
դեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղ-
չով ետ կ'առնուին :

ՍՍ.ԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

12—30

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՀԻՆԵՐՈՒ

ՅԻՒՐ ՍԵԿ ՆԱՄՈՋՈՒՄԸ

Ներկայիս՝ գարնան ծաղիկներու գազափարին մէջ արմատացած է խիստ սխալ ու յոռի ըմբռնում մը, որ դժբաղդաբար գանոնք, իրենց բուն խտէտին չհասցնելով հանդերձ, շատ մ'ալ հոգերու ու վշտերու կ'ենթարկէ ու այսպէսով իրենց սովորը կեանքի տեւողութեան ժամանակամիջոցին մէջ կը լինին ապերձանիկ տխուր ու յուսահատ:

Երկսեռ երիտասարդներու մեծամասնութիւնը, առանց գիտակցութիւն ունենալու իր առած քայլին, առանց լուրջ ու խոհուն խորհրդածութեան մ'ենթարկելու իր գազափարը, կը տրամաբանէ, կը գործէ, ու կը գործադրէ իր փափաքածին ու պահանջածին համեմատ բոլորովին անտեղեակ թէ՛ այսպէսով կ'ստորնացնէ հանրութեան առջեւ զինքը ու կը գահալիժի այն բարոյական նիւթական՝ ու ֆիզիքական բարձրութիւններէն՝ որոնց տիրանալու համար թերեւս անազնի զոհողութիւններ ըրած ու վերջապէս կեանք մաշեցուցած էր, և մինչդեռ ասոնց փոխարէն կը յուսար ու կ'սպասէր, հանգիստ կեանք մը ու երջանիկ ապագայ մը, կը գտնէ ինքզինքը կեանքի դառնութեանց ու վեպանք՝ ուր վշտերու ու յուսախափութեանց բարձրաբերձ ալիքներն անյազօրէն ու շրջէ կանուխ պիտի հասնին տապալելու անոր փճացած կեանքը:

Եւ ինչու այս ամէնը. — Բացայայտ է արդէն թէ, ո'ւ է էտկ մը կեանքի ամբողջ ժամանակամիջոցին մէջ երեք ամենագլխաւոր շրջաններէ կ'անցնի, որոնք են ծնունդ, ամուսնութիւն և մահ. ահա այս երեք շրջաններուն մէջ միմիայն ամուսնական շրջանն է որ ամենէն աւելի նուիրական հանգամանք կ'ստանայ, քանի որ՝ միայն հոն է՝ ուր մարդ էակը բանականօրէն կ'ազգայ ու կը գործէ:

Ճշմարտութիւն մ'ալ չէ՞ ըսել թէ ամուսնութիւն մը երջանկաբեր լինելու համար անհրաժեշտ պայման է երկու ամուսնիքէ հաւասարապէս ու զիրար գերազանցող սէր ու համերաշխութիւն, ու առանց ասոնց գոյու-

թեան նուիրականութենէ կը հեռանայ ու կը խորասուզուի պարզապէս անասնական յատկութեամբ թշուառութեան խորը: Արդ անհրաժեշտ չէ՞ ընտրութեան ատեն լուրջ ու խոհուն դատողութիւնը ու գիտակցօրէն գործելը: Ահա ճիշդ այս պարագան է զոր առարկել կ'ուզեմ:

Թէ ինչպէս. — Իժապողաբար ներկայ ժամանակին մէջ կարծես թէ բարոյական, առողջութիւն, զարգացում, ճարպիկութիւն ու այսօրինակ օգտակար ձիրքեր ու միեւնոյն պարագայի նիւթական կարողութիւն և այլ հանգամանքներ կը կեդրոնանան գեղեցկութեան ու յարգարանքի մէջ, (այսինքն, վերաբերի արական կամ իգական սեռի, ո'ւ է անձ մը որ գեղեցիկ ու աղուոր հագուած է, այնպիսի մը միեւնոյն պարագային կը նկատուի զարգացեալ, ազնիւ ու հարուստ, առանց մտածելու թէ թերեւս ասոնցմէ զուրկ ու նոյն իսկ պարզապէս ապուշ մ'է), քանի որ երկսեռ երիտասարդներէն շատեր մէկ ակնթարթի մէջ, այս միջոցներով մէկը մէկէ կը յափշտակուին ու կը մագնիսանան, առանց միմիայն սրտին ու նկարագրին խորերը խորասուզուելու ու փնտռելու այն յատկութիւններն, որոնցմով պիտի կարենան յառաջդիմել կեանքի պայքարին մէջ, առանց բարոյականի կարեւորութիւն տալու ու առանց երեւակայելու ու խորհելու թէ ապագային իրենց արտադրած պտուղին արժանի տէրեր պիտի կարենան լինիլ ու պիտի յաջողին մի քանի ուրախ ու զուարթ ժամանցներէ վերջ, շատ բունակել այն գեղեցիկ տրամադրութիւնները որոնք իրենք տեւողական ու շարունակելի կը կարծէին. ու այսպէս կոչում կընեն իրենց սիրոյն ու օր մըն ալ կը փութան դիմել այն վայրը ուր պիտի հաստատուի իրենց միացումը «այո» ի խոստումով:

Կարծեմ թէ յուստես չեմ համարուիր երբ ըսեմ թէ այս կերպ ամուսնացողներէն հազիւ հազ 10 % կրնան անդորր ու երջանիկ կեանք մը անցընել. իսկ մնացեալէն ինչ կը սպասուի, բարօրութիւն, երջանկութիւն թէ... Թշուառութիւն, բնական չէ՞ հոն յուսալ յուսախաբութիւնը ու հետեւանք՝ փճացումը:

Երեւակայեցէք, ինչ կը զգայ այն զար-

գացումով, տաղանդով ու բարոյականութեամբ օժտուած այրը կամ կինը, որ իր կեանքի ընկերը կը գտնէ ու կը տեսնէ պարզապէս տգէտ՝ կոշտ ու լկտի մը, ու այսպէս միմիանց ներհակ ընդհանրութեամբ օժտուածներ ինչպէս կեանք կրնան ունենալ աշխարհի մէջ, ուր՝ արդէն հոգը, վիշտը ու դառնութիւնը տիրապետած է։ Քանի՜ քանի՜ներ կան որոնք գրեթէ ամենատղինչ պատճառներով զիրար լքած են ու այսօր կ'ողբան իրենց տաղտկալի վիճակը, որուն ենթարկուելուն միակ պատճառն իրենք եղած են իրենց անխոհեմութեան շնորհիւ և կամ տրգէտ ծնողներու յամառ ստիպումները մըղած են զանոնք այդ տխրասարսուռ իրականութեան։ Կան այնպիսիներ ալ որոնք իրենց յամառ «եսը» կարծես ցուցադրելու նպատակաւ կ'ընդդիմանան ծնողաց, բարեկամաց ու բարերարաց յաճախակի ազդարարութեանց, նոյն իսկ զիտնալով որ ապագայ երջանկութիւնը յամառ եսամոլութեամբ պիտի թունաւորեն ու պիտի ընկրկին թշուառութեան անդունդը։

Թերեւս գտնուին ազնիւ ընթերցողներէս ու ընթերցողուհիներէս այնպիսիներ, որոնք յոռետես լինին իմ նկատմամբ, իբր գեղեցկութեան ու յարգարանքի հակառակորդ։ Քա՛ւ լիցի, վասն զի ասիկա պարզապէս բռնութեան դէմ հակառակիլ կը լինի և նամանաւանդ որ, այս պարագան իր ճաշակին ու նրբութեան հետ ուղիղ կը համեմատի, այլ սա պարագան ի յայտ բերել կը փափաքիմ թէ նախ ազնուութիւն, բարոյական ու իւրաքանչիւրին յատուկ ձիրքերը պահանջուի ու եթէ այնպիսի մը՝ բնութիւնն ալ իր ձրի պարգևներով օժտած է՝ թող զինքը երջանկագոյն դատէ։

Հոս կը փափաքիմ հրաւիրել ծնողաց ու շաղթութիւնը, որպէս զի ի մանկութենէ ջանան դրնչմել իրենց զաւակաց նկարագրին մէջ խոհունութիւն, լրջութիւն ու կենցաղագիտութիւն, ու մի անգամ ընդ միշտ հսկեն անոնց ամէն մէկ քայլափոխին ու հանգիստ թողուն անոնց զէպի բարիքն միտումը, եթէ կը փափաքին ունենալ հանգիստ ու քաղցր ծերութիւն մը ու տեսնել անոնց բարօրութիւնն ու երջանկութիւնը։

Ս. ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՀՈՒՆՈՍԻ ԶՐՎԷԺՆԵՐԸ

— — — — —

Ահա ելի աղմուկ! Աս է առաջին տպաւորութիւնը։ Յետոյ կը դիտէ մարդ։ Զրվէժը ծոցեր կը կաղմէ որոնք լայն, ճերմակ թեւերով կը լեցուին։ Այս արհաւիրաց տեսքին մէջտեղը, հրդեհներու մէջ եղածին նման անվրդով փոքր մասեր կան։ Փրփուրներու խառնուած պուրակներ, մամուռներով ծածկուած առուակներ, Բուսէնի (*) Արկադեան հովիւներու արժանի աղբիւրներ, որոնք մեղմօրէն շարժող մանր ճիւղերով հովանաւորւած են։ Եւ վերջը, այս մանրամասնութիւնները կը մարին և ամբողջին տպաւորութեան տակ կ'իյնաք նորէն։

Յաւիտենական փոթորիկ։ Կենդանի և կատաղի ձիւնակոյտ մը։ Փարչատեսիլ և չքեղ անդունդը, զինքը այնչափ մօտէն դիտելու համարձակողներու երեսին, կատաղութեամբ, մարգարիտէ անձրեւ մը կը սրսկէ։ Սքանչելի է։ Զրվէժին չորս մեծ ուռեցքները կ'իյնան, նորէն վեր կ'ելլեն և նորէն վար կ'իջնան անդադար։ Կարծես մրրիկի կառքին փայլակնացայտ չորս անիւներուն առջիդ դառնալը կը տեսնես։

Մեռած տերեւներ ոտքիս տակ կը դողդղեցնեն։ Ապառաժի անհարթութեան մը վրայ, չորցած խոտի փնջիկ մը նշմարեցի։ Շաֆհաուզի (**) Զրվէժին տակ չորցած! Սա ջրհեղեղին մէջ կաթիլ մը ջուր պակսեր է իրեն։ Սրտեր կան որոնք խոտերու այս խուրձին կը նմանին։ Մարդկային յաջողութիւններու յորձանքին մէջտեղը կը չորնան անոնք։

Ափսոս, պատճառն այն էր որ, անոնք զրկուեր են սէրէն, ջուրի այդ կաթիլէն որ երկրէն չբխիր, այլ երկինքէն կ'իյնայ։

(Թարգմանեց)

ՄԻԲԱՅԷԼ ԵՍԼՊԱՆՏԵՍԱՆ

Գատրգիւղ

(*) Ֆրանսացի նշանաւոր նկարիչ որ ի մէջ այլոց «Արկադիոյ Հովիւները» անուն պատկեր մը գծագրած է։

(**) Շաֆհաուզի Զրվէժը Զուլցբերիոյ մէջ կը գտնուի և 100 մէթր լայնութեան վրայ, 15—20 մէթր բարձրութիւն ունի։

ՔԵՐԹՈՂԱԿԱՆ ՍԷՐ

Զօն առ ֆերքոյս ունաւս պանծացեալս յսնձինս՝ թէ քանաստեղծի իցեն, եւ ստեղծեն քանս քանաստեղծականս պէս պէս գունակս:

—Ոհ ոչ գիտէի զի քաղցր է սէր եւ քան ըզխորիսս մեղու.

==Բայց այդ մեղրեն շատ ուտողը շատ հեղ արցունք կը հեղու:

—Ոչ գիտացիք զի՞նչ արարից քանզի մինչ ցայգ ոչ նիրհեմ.

==Պառկած տեսնող պէտք է օղի առնել քանի մը սիրհեմ:

—Երկմտիմ թէ սիրէ նէ զիս արդեօք սիրով հասարմաս.

==Մի կասկածիր քրջե ու կեր երէ ունիս պահսիմաս:

—Ո՛ւր դիպիցիմ, ո՛ւր լուիցեմ արդեօք զնային հեռ քարքառ.

==Առ երկու մոլ գիշերները տեսիլ համար տրեկէ վառ:

—Ընդէ՛ր արդեօք որ տառապիմս ոչ հաւեսեցի նէ ընդ իս.

==Զի տրեղ ես իշիկ մ'աղ լոյծ ու միշտ անգործ կը նըսիս:

—Ո՛հ որպիսի՞ կարի ուծգին սասիկ է սէր ֆերքողաց.

==Հաւատա որ կուտ քունեիք նէ մեկ հասնիդ չէր քողած:

—Զեզ պաղատիմ Մուսայք անմահ մահկանացուիս զըթացէք.

==Բընաւ այդպէս չոր խօսեալս վրայ դուք յոյս մի տածէք:

—Այսու գնացիւք յայտ իսկ է զի ցնդեցի զիմ հաննար ուռ.

==Պէտք է գիտնալ ապահով թէ սէրը սիրով է անուշ:

—Ոհ վասն իմ եղբւ համայն խաւար մըթին տեղերք.

==Սերն անսահման սէրը անհուն ուր չես գտնու մի եղբրք:

—Յայսմնեք է ինձ բաժին ֆերքողական մահ եւ եթ.

==Մ'անպարտեր, կամաց քաշէ, մարդ չի վազեր ետեւէդ:

—Ո՞ գրեցէ յետ մահուն իմ զսէրն իմ այս ցնդեալ յօդ.

==Անհոգ եղիր, այդ գործերուն մասնագէտն է քիսր Թեոդ:

Քեռքեց

ՍԱՂԱԹԻԷԼ

ԳԻՏԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ՄՈՄ-ԾԱՂԻԿԸ

Առէք լաշնիկ ջրի դաւաթ մը ու անիկա կէսէն վեր լեցուցէք պարզ ջրով, յետոյ վառուած մոմ մը առնելով՝ պատկերին մէջ տեսնուածին պէս՝ ծաղիկք ջուրին վրայ մոմին հալած մասը կտրիլ կաթիլ կը թափի ջուրին երեսը և հոն կը կազմէ ձերեակ սիրուն ծաղիկներ։ Մոմը որչափ ամանէն վեր կամ վար բռնուի, մոմ-ծաղիկն ալ ան համեմատութիւնով պզտիկ կ'ըլլայ կամ մեծ։ Յետոյ կորածիւ խիստ բարակ երկաթի թելեր առէք ու անոնց ծայրերը մոմին բոցովը քիչ մը տաքցնելէ վերջ, ջուրին մէջ գտնուող ծաղիկներուն ճիշդ կեդրոնը մղեցէք ու վեր առէք։

Այս կերպով մոմ-ծաղիկը, մեծ ու պզտիկ, կորածիւ թելերուն վրայ առնելէ ետքը՝ մեծերը վար, պզտիկները վեր, աստիճանաբար անցուցէք քիչ մը աւելի հասակիկ թելի մը վրայ և զայն դրէք բերանը տերեւի ձեւով կտրուած կանանչ թուղթերով լեցուն ծաղկամանի մը մէջ։ Այս շատ պարզ միջոցով կուսկնաք սիրուն մոմ-ծաղիկ մը որ ոչ գոյնը կը նետէ և ոչ ալ կը թուամբ։

Զ. Մ.

ՕՐՕՐԵՐԳ

ՆՈՐԱԾԻՆ ՆՈՐԱՅՐԻՆ

Նեճնի՛ հոգիս բունդ է եկեր քնացիւ,
Գոցէ աչերդ, ա՛յ հերիք է շատ լացիւ,
Մի լաւ պաշիկ կուտամ աղուոր աչերուդ
Օրօ՛ր Նորայրս, մայրիկդ մեռնի արեւուդ։

Թռչնիկն հիմա կը քնանայ իրեն բոյն,
Գառնուկն ալ չի մայր ծոցը դաւսերուն,
Գիշերն է մութ, լուռ է բնութիւնն դեռ համայն
Փոքրիկներն ալ մըծի՛կ մեծի՛կ քնանան։

Հրեօսակներն քեզ պահապան կանչեցի,
Օրորոցըդ Տիրոջ խաչով կընեցի,
Նեճնի՛ Նորայրս, նոր յոյսերուն իմ արեւ,
Ես ալ անհուն հսկեմ գլխոյդ միշտ վերեւ։

Պիտի մեծնաս վաղը նիվան հասակով,
Ո՛հ երջանիկ ըլլամ պիտի ես քեզմով,
Պիտի մոռնամ իմ մայրական ցառապանք
Դուն ինձ համար ես խինդ, արեւ ու բերկրանք։

Նեճնի՛, ցեճնի՛ բռնիկդ հոգւոյս սիրածին,
Ի՛նչ փոյթ ծովին ալիքն ու շանթն երկնին,
Սիւքս խաղաղ քեզի համար ապաստան,
Կեանքս նոյնիսկ սիրոյդ համար ես կուտամ։

ՄԵՂՐԻԿ

ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

—Կին մըն է, բայց է՛ր գրչին քան իշին
Մասնէն աւելի վարժ եմ Սիպիլին :

—Դիսաւո՛ր մըն է արդեօք Անայիս,
Որ տարին հեղ մը կը ցոյայ, նայիս :

—Եւ-սէր...ա՛յ հեռիք, չըսուած եւ դեռ «Պէ»ն
Ո՛վ չի հասկնար իսկոյն Եւսէրպէն :

—Կը պարտինք մէջ մեր գրական մարզին
Քիչ մը քիչ ծաղկունք Հայկանոյց Մառէին :

—Թո՛ղ ու բո՛հին մէջ այժմու գրի գո՛ւ
Է՛ր լուռ կը մնայ Զօհրայ Գրիգոր :

—Խմբագիրներուն մէջ արդի grands
Ծայռուն դիմք մը չէ՛ Մասիսին Տիգրան :

—Ինչո՛ւ շատնց է Արեւ կամ Գուրգէն
Այսպէս մեզ գրիք իր մտքի հուրքէն :

—Կարելի՛ է որ — երբ գրէ Լիլան —
Կարդացող այժերն անգունեմով չի՛ լան :

—Գրէ, մանաւանդ երբ ճառէ Քասիմ
Ա՛յ հիսնալէ երեք կը կասի՛մ :

—Գրիչդ հմայքո՛ս քնդ միթէ ո՛ր դի՛մ
Պարզե՛ւ ըրած եմ արդեօք, Թեոդիկ :

—Ժ. Շիրակացի, Սիմօն Ծերունի,
Դիտէ՛ք քարգնանած ինչ գործեր ունի :

—Օճոտած անկեղծ գրիչով մ՛ ուժեղ
Գրագէս մը չէ՛ վարդապետ Մուսեղ :

—Գեշ չէր կարծիքիս վրան Հորոյիմ,
Բայց ինչո՛ւ հանեց վերջերս նոր... օյլիմ !

—Գրածներն եմ կուռ, բայց է՛ր Գազանի
Անունն երբ լսեմ վրաս գայ... սանձի !

—Որքերեան եւ քէ Զարգարեան Ռուբէն
Զունի՛ն ո՛ն մ՛ անուշ աւելի ռուսիէն :

—Յօդուածներուն մէջ, զոր գրէ Կալոօս
Ուղղութիւն մ՛ արդեօք, ըսէք, կա՛յ որոշ :

—Արհէ՛սը կ՛ուզէք Լ. Բանագողին,
Միշտ կնոջ գաղտնեաց ծայրն բանայ ֆոյին :

—Յօդուածներն գրուած Յ. Տէր Յակոբէն,
Արդեօք սիւրս ու միտք նուա՛գ հա՛ կոչիէն :

—Էզրի փոխուելու երեւմն իրիճան
Ինչո՛ւ շատ ըրաւ Պարսամ-Միրիճան... :

—Կուռ գրածներուն՝ Լեւոն Շաքրիճ՝
Շուրջը քաշըջոյք ինչո՛ւ շատ ըրին :

—«Կիներու մասին» հե՛, Մոյրեան Զաւան
Պիտ՝ գրէ արդեօք դեռ քանի՞... սաւան :

—Քննադատական մի սիրուն ! essai
Զե՛ աս, զոր գրեց... fantaisiste

ԷՍ.ՍԷ

ԶՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

ԹԵ՛Ք ՄԻ ԶԻՅԹ

Այ ու ձախ ձեռքերնիդ որոշ քանակու-
թիւնով լեպլեպի առէք, պայմանաւ որ մէկ
կողմինը զոյգ ըլլայ ու միւսը անզոյգ, ես
առանց գիտնալու թէ ո՛ր կողմինը անզոյգ
է, պիտի գտնեմ :

ԵՂԱՆԱԿԸ

Լէպլեպիները ափերուն մէջ առնող անձը
աջ ափին մէջ գտնուածը որչափ որ է, այն-
չափ գումար մը վրան պիտի դարնէ, իսկ
ձախ ձեռքին մէջինը որչափ որ է, անոր
վրայ ալ կրկին գումար մը պիտի դարնէ.
յետոյ այդ երկու գումարները իրարու վը-
րայ պիտի բարդէ եւ արտադրութիւնը զոյգ
է թէ անզոյգ, ինծի պիտի իմացնէ : Եթէ
այդ գումարը անզոյգ է, ես կ'ըսեմ թէ աջ
ձեռքի լէպլեպիները զոյգ ու ձախ ձեռքինը
անզոյգ է, ընդհակառակը՝ եթէ գումարը
զոյգ է, կ'ըսեմ որ աջ ձեռքինը անզոյգ եւ
ձախինը զոյգ է :

Օրինակի համար

Ենթադրենք որ այդ անձը աջ ձեռքը 4
հատ ու ձախ ձեռքը 3 հատ լէպլեպի առած
էր. առաջինին վրայ նոյնչափ մըն ալ գու-
մարելով կուսնանք 8 ու ձախին վրայ
կրկինը գումարելով կուսնանք 9, Ասոնց
ամբողջութիւնը կընէ 17՝ որով կ'ըսեմ թէ
աջ ձեռքինը զոյգ ու ձախինը անզոյգ է :
Ընդհակառակը եթէ աջին մէջ 3 եւ ձախին
մէջ 4 լէպլեպի ըլլար, Յին վրայ նոյնչափ
մըն ալ գումարելով կուսնանայինք 6 եւ 4ին
վրայ կրկինը աւելցնելով կ'ուսնանայինք 12
եւ որովհետեւ այս երկուքին գումարը 16
կընէ, այն ատեն պիտի ըսէի որ աջին մէջ
անզոյգ եւ ձախին մէջ զոյգ էր : Ու երկու
պարագային մէջ ալ պիտի չափէի գրաւը :

Զ. Մ.

ԳՆԴԱՍԵՂԸ ԵՒ ԿԻՆԵՐԸ

ՕՐՈՒՍՆ ՆԻՒԹ

1903 Յունիս 2ին էր, երբ Ալեմտաղին ոտքս առաւ, 1905 Յունւար 18ին, չեմ գիտեր ո՞ր կանացի աչքը եկաւ զետեղուիլ աջ ձեռքիս վրայ, զիս արգիւելով կղկ իրենց յատուկ գաղտնիքները զորս ամէն շաբթու չէի քաշուեր հրապարակել:

Մինչեւ այսօր կանացի ու պառաւական դեղերը և ուրիշ առասպելական խաղերը կամ դեղերը գոյութիւն չունէին ինձ համար, բայց հիմա փորձով կը հաստատեմ թէ, կինները իրենց յատուկ տարրերով կարող են զգեստնել մարդը: Մի անգամ ընդ միշտ կը խրատեմ բարեկամներս տեղի չտալ կանացի ոխին, որպէս զի չտուժեն ծանրածանր կերպով:

Ո՛րչափ հալածեցի զիրենք, ո՞րչափ պատուեցի զիրենք պատու թանձր քօղը, այնքան տուժեցի պէտք է ըսել. օրինակ, ոտքս, ինչպէս այսօր ձեռքս:

Սենեկիս չորս պատերուն մէջ ականջիս կը հասնին այն բոլոր վայրերան «օ՛խ»երը, որոնց մօտ ծնողական «վա՛խ»երը լսելի չեն ըլլար:

Քաջ գիտեմ թէ բոլոր կանացի աշխարհը լսելով ձեռքիս վիճակած ցաւը, կ'ըսեն և կամ պիտի ըսեն.

—Օ՛խ, էրկնաւորին խշմին էկաւ ա՛... .

—Հեղ մը ձիւր կոյրեցաւ, աս հեղու ալ ծառքը...

—Մարդ ըրածը կը կտնայ կըսեն, Աստուած ալ, ո՞ր ծառքովը քիմ մեզի թիֆթիկ թիֆթիկ կը պերէր կոր նէ, ան թառափին տուաւ ցաւը...

—Քա մարիկ, նէ՛ ներսերնիս ձգեց, նէ՛ տուրսերնիս. աս ամէն իժիբ կնիկները, կընիկները, իշտէ ինքն ալ կնիկեցաւ տնկուեցաւ. Աստուծոյ աչկին մեռնիմ, հախ էր չէ ելաւ...

—Կը ճիւքեն ետ, ինտոր քի մեր ամենական դործը շախուռ շախուռ կրպերէր նէ, աչքին սիրած տաքթօս ալ իր ծառքը ըրեր է, պարէ քէռ մախասով կըյրեր տէ մարիկ մարիկ պերէր...

—Հէմէն ուլանմիշ ըլլայ տէ ըլլել ըլլել պանի, ինտոր քիմ աղջիկներուս փէշը չձըգեց տէ, ֆիթիլ ֆիթիլ քիթերնուն պերներնուն պերաւ նէ, անանկ ալ ֆիթիլներ պանին ետրաին:

Ասանկ և ասոնց նման անէծքներ միշտ կը հասնին ականջիս, մինչ ես պանտաֆնրու մէջ առած ձեռքս, հինգնոց պէպէքի մը պէս կուրծքս ի վար առկախ օրելով՝ տանտանելով կը փայփայեմ մեղմացնելու համար նշգրակին ցաւը, մկրատին կոտորուքը:

Արհեստին գէշը չըլլար կ'ըսեն. Ճակատագիրս տնօրինած է կինները հալածելով աղբուր, ու ես չեմ ուզեր թերանալ ինձի վիճակած պաշտօնիս մէջ:

Գաղղիացիք chercher la femme կ'ըսեն, կնոջ վերագրելով այն ամէն ձախողուածները, որոնք իրենց կեանքի ճամբուն մէջ ոտքերնուն կը պլլուին: Ան է ընողը, ան է պատճառ, վերջապէս անով է որ աշխարհ անդունդէ անդունդ կը գլորի, կ'ընէ:

Թէ ի՛նչ յարաբերութիւն ունի կինը՝ ձեռքիս վրայ կատարուած վիրաբուժական գործողութեան հետ, վարը պիտի ըսեմ: Գնդասեղը, որուն կնոջ՝ գործիք անունը կուտան, բուն պատճառն է ներկայ վիճակիս: Մէն մի կին, մաղէն մինչեւ եղունգը անպատճառ զինուած կըլլայ այդ չըլլալիք երկաթիկներէն, գրեթէ տասը քանի չափ: Պուզին երկու կիսաշխարհները անպատճառ կը կրեն անոնցմէ մէկ քանին, չիակին վարի մասին մէջօքը պսակած կ'ըլլան անոնք, ի հարկին մատներու տակ իյնալու համար, փէշին կունակի ծարը ան է բռնողը, թեւեւ

րու ծայրերը անոնք են գոցող, և դեռ վերջապէս գնդասեղը ամէնէն շատ կը տեսնուի այն կարգ մը կիներու վրայ, որոնց en un coup d'œil չըլլիստի ածականը բերնէ կելլայ կը փակի վրանին: Նախապէս մինինիկ պալարիս մէջ սե բիծ մը նշմարելով զայն հանելու համար բիշկին լանտէթէն առաջ կնոջ գնդասեղին գիւնցի, ու անոր ծարիկով բզկեցի հանել այդ օտար մարմինը ընտանի մարմնոյս մէջէն, և ահա նոյն այդ գործողութիւնը դուռ բացաւ, եթէ ոչ աղետալի, գէթ ցաւատանջ նեղութեան մը:

Հիմա տեղը չէ՞ կնոջ վերագրել այս անականկալ փորձանքը քանի որ անոր բուն պատճառը գնդասեղն էր:

Երբէք կարեւորութիւն տրուած ու նրկատի առնուած չէ կանացի թուալէթին անհրաժեշտ պէտքը լրացնող սա գնդասեղը: Ամէն օր, ամէն ժամ պէտքը կը տեսնուի անոր անշուշտ կանանց մասին խօսելով:

Շքեղապէս ու ճոխ սարքուած երեկոյթի մը պարի էն տաք միջոցին, թուալէթի ամենակատարեալ ճոխութիւններով տիկին մը, որուն վրայ արուեստի նորութիւնը իր ինքնատիպ փուլերով կը փալտի և երբ զանոնք կրող ենթական տիկինը՝ իր հրեշտակի թեւերը լարած, չիք ու մօտէն քավալիէին ուսն ի վեր, վալսի մը դիւթական ու մոգական խաղերէն հմայուած կը դառնայ, անթիւ, անհամար զոյգերուն մէջ, յանկարծ պարողներուն մէջէն ձախաւեր պօթ մը ակամայ կը հանդիպի տիկնոջ ֆռու ֆռու քղանցքին և ահա ճճճճճճճճճճ... փէշը տեղի կ'ըտայ ի հանդէս ածելով ամուսնոյն գիշերնոցին թիւը, զոր չքնաղ ու մօտէն տիկինը մոտ երեւնալու համար տակէն իր խալչալըս գործածած էր...

Գնդասեղ մը ի՞նչ անուշ ու փրկարար պաշտօնը կ'ունենայ հօս, եթէ Տիկինը ճարպիկ արթնութեամբ մը իր հին և նոր կիսազուգեբէն քաշելով ծածկէ ամօթը:

Երկու սրտակցորդ երկսեռ զոյգերու լուսնի լուսով բաց օդին բայ խոնարհած ատենին, երբ երիտասարդին մեղրածորան բերնէն կը թռչտին երջանկութեան և ազագայ աւելի բուռն սիրոյ հաւաստի խոստումները, իր մետաքս ֆիշիւին տակ սիրա-

հալ հրեշտակը թէ՛ն կցկոտուր բաւեր մը կը փոխանակէ իրենին, սակայն ինքը կը տառապի, կը տանջուի ու հարկ անհրաժեշտ սիրային փոխանակութեան մը պարտքը չի կրնար լիովին կատարել:

«Ռանտէ վու»էն առաջ երեկոյեան ճաշին վրայէն իւր պտուղ կերած չոր թուզին մանրիկ հատիկներէն մէկ քանին իր փրատած ակուային մէջ զետեղուելով՝ կոտորուքէ կոտորուք, յաւէ ցաւ կը գլորեն խեղճ ենթական:

Գնդասեղ մը ի՞նչ անուշ ու փրկարար պաշտօնը կ'ունենայ հօս, եթէ օրիորդը անոր միջոցաւ ազատելու փրկարար զաւա-փարը յղանայ... ամուսնութենէն առաջ:

Նոյնպէս ըստ արդի մօտէն դրուածն, երկու նշանածներու «թէթաթէթ»ին՝ որ ընդհանրապէս մինակ ու առանձին սենեակի մը մէջ կ'անցնի, իրենց էն տաք ու սիրահալ տեսակցութեան ու խօսակցութեան ատենին երբ պատահի որ, խօսքէն ու խոստումէն հրահրած շրթները զովանալու համար մօտենան ու հպին իրարու... չոր սատանան ընէ որ, օրիորդին փոքրիկ քուրկը իր պէպէք գրկած անականկալ ու անտեղի աքթոր-բւէզանս մը ընէ...

Գնդասեղ մը ի՞նչ անուշ ու փրկարար պաշտօն մը ունի, երբ օրիորդը բւէզանս տ'էսքոխով մը սաստէ քուրկը — Մամաին խապար տաս նէ լեզուիդ թօփու կը խօթեմ հա՛...:

Ի՞նչպէս վերի օրինակներէն կը հետեւի, գնդասեղը կնոջ մօտ և անոր ձեռքին մէջ ի՞նչ երբինեանգ գործեր կրնայ տեսնալ. ահա՛ ինչու ըսուած է ու կ'ըսուի «կնոջ անբաժան գործիքը»:

Բայց երբէք չէի կրնար երեւակայել թէ օր մը նոյն այդ քցիւիկ ու այր մարդուն չպիտոյ մէկ առարկան պիտի կրնար թափել տալ ինձ այն յորդառատ արցունքը, զոր երբեք չէի փղձկած, նոյն իսկ «էր երբեմն յորժամ ոչ... էր կին» դրացիս Զուսուլու լիչան, որ իր տասն և չորս գարուններուն մէջ պատանքուած պատուհանիս առջեւէն անցուցին...

Պարզ գնդասեղ մը այսօր թէեւ զրկած է զիս մտրակելէ իր տիրուհիները, սակայն

և այնպէս բժիշկին նշարակը հակառակ իր ալ աւելի քանդիչ ու աւերիչ բնոյթին եկաւ ջրել ու անհետացնել այդ կոտորուքները և յուսալից եմ թէ յաջորդ թիւով բուն իսկ մատնեցողս պիտի կրնամ չարունակել գործս եթէ երբէք կանացի անէծքներ չըխանդարեն . . . ուղեղս :

Սակայն չպիտի դադրիմ երբէք պատուել զձեզ չըջապատող ամօթի քօլը , նոյն իսկ եթէ մարմինս ամբողջ յօշոտուի :

Դարման մը միայն :

Ընդունեցէք պարզասիրութիւնը , հրաժարելով ձեր քուրջերու անհարկի ծախքերէն , յարգեցէք ձեր ամուսինները ճանշնաւով անոնց արժանիքը ու դերը ամուսնական աշխարհին մէջ , կրթել գիտցէք մանչերէն աւելի ձեր ազնիւները , բամբասանքը , մականութիւնը որ իւր ձուլէ Եւրպայական ձեր կալաչտ թերնէն հեռացուցէք , ու միջիւր որ ամուսնութեան յարմար և ի վիճակի չըլլան ձեր ազնիւները միջնորդ կանոնաց ապրուստի աղբիւր և խօսքի նիւթ մի ընէք զանոնք . . . այն ատեն ձեր վրայօք և կամ ձեր յուր բարքերը զարնելու , քաջըջելու նիւթ և առիթ չկրնար ունենալ , այսօր ձեր աչքին կողով կամ գրող :

ԼԷԼԱՆ

Մ Օ Տ Է Ռ Ն Է

Եթէ սալօնի մը մէջ գտնուած ատեննիդ մինչ ձեր ծխած սիկառէթին բարդ ամպիկներուն մէջ լերացած էք , Զեզի մօտեցող օրիորդ մը , հաղար նազանքներէ վերջ , ձեռները իրաք չվիւղով , — «Միտքս զրի որ , մինչեւ քսան տարիկանիս , երգեմ , պարեմ ու անկէ անդին . . . մայրապետի սե վերարկուելն մէջ պլլուիմ ու ալ քաջութիւն ընկերութենէն , ինչպէս կը գտնէք կեանքիս ծրարագիրը» — հարցնէ , «՛հ , մի մեղադրէք զինքը , հապա մօտեցէք քիչ մըն ալ իրեն , գիտնալով թէ իզական սեռին սիրոյ արտայայտութեանը օրուան խեղճ ու կրակ մօտէնն է :

Եթէ բարեկամ մը ունիք , որ իր սոսկ թարգմանութիւններուն համար ճշմարիտ գրագէտի վերասլացիկ թռիչները կառնէ ձեր մօտ , մի՛ ծաղրէք զինքը , կ'աղանչեմ , հապա , խորհեցէք թէ մօտէնն է :

Եթէ ճամբան դացած ատեննիդ բարեկամներնուդ մէկը ձեր ուսին զարնելով , — «Իմացա՛ք , Գ.հրուն տղան Ֆին աղջկանը նշաներ են , բայց մէկը Ամերիկա կը գտնուի , իսկ միւսը՝ Հիւսիսային Բեւեռ» աւելցնէ խնդալով , չըլլայ որ դարմացած մնաք , այլ մտաբերեցէք թէ շատ կարելի է , քանի որ օրուան մօտէնն է :

Երեկոյթի մը մէջ գտնուած , երբ ո եւ է կին մը պարի հրաւիրած ատեննիդ , «ներեցէք պարոն , կը թոյլատրէք որ ամուսնէս հրաման առնեմ» , պատասխանելով , անկիւն մը քաշուող մէկը ակնարկուի , մի՛ աչպանէք քաղաքավարութեան օրէնքը , և մտածեցէք պահ մը թէ , արդի մօտէնն է :

Խօսակցութեան մը պահուն , — «Ես անոնց տունը իսկ ոտք չեմ դնել երբէք , քանի որ անոնք քիչ մը տմարդի ընտանիք մը գտած եմ» ըսուելէ վերջը՝ ծիծաղելի զուգադիպութեամբ մը , տարբեր երեկոյթի մը մէջ , երբ խիստ հաճոյակատար վերաբերում մը դիտէք , ակնարկուած ընտանիքին ներկայութեանը , այդ պարոնին կողմէ , չըլլայ որ լուրջ գաղափարնիդ (եթէ ունիք) փոխէք իրեն նկատմամբ , գէթ վայրկեան մը մտածելով թէ . . . մօտէնն է :

— «Իբրեւ զարդացած մէկը , պէտք է ճանչնամ ամուսինս ըլլողը և յետոյ կարգուիմ» ըսելէ վերջ , երբ ո եւ է մեծխօսիկ մէկու մը լոկ անձնական քառթ-լիզիթով մը նշանուած ըլլալուն լուրը տան ձեզի , չըլլայ որ արհամարհէք զինքը , այլ փութացէք ձեր օրագրին մէջ գրել այդ նորոյթն ալ , ընդունելով միշտ թէ՛ այս բոլոր պատկերացումներուս պէս , ան ալ արդի մօտէնն է :

Ռասիոնիսի

ՀՈԳԵԿԱՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ

(ԳԵՂՈՆ)

Սէրը երգը ծնաւ հոգիիս տենչը յագեցընելու համար, իսկ երգը՝ նախանձը՝ զայն խռովելու համար։ Սիրել ու չնախանձիլ՝ անկարելի է։

Սիրունի՛ս, երբ սէրդ նոր կը սկսէր կածկըլտալ կուրծքիս տակ, երբ քու առջեւդ լեզուս կը սկսէր թոթովել, երբ քու ներկայութիւնդ սարսուռով կը պատէր սիրտս։ Ո՛հ, այն ատեն ես նախանձոտ չէի։ Կ'ուզէի կատարել բոլոր քմահաճոյքներդ որպէս զի ինձմով մինակ զբաղիս, ինձմով մինակ հաճոյք զգաս։

Աչքերուդ նայուածքները շունչեր եղան սէրս արծարծող։ հաւաչներդ կրակներս բորբոքեցին, բառերդ սէրիդ թարգմաններ եղան, ու երբ զգացի թէ՛ սէրովդ զիս խնդեցնելէ վերջ կրակովս սկսար մրկել, երբ տեսայ որ սիրտիս կայծերը պարունակող տետրակիս թերթերը կը թղթատես, հոն սուրբ սէրիս էջերը կարդալու համար, ո՛հ, այն ատեն նախանձը ծայր տուաւ կուրծքիս տակ, կ'ուզէի իմ թուղթերուս մէջ թաղելիդ տեսնել, կուզէի քեզ հետ ծուռնկ ծուռնկի նստիլ ու կը նախանձէի ու կը տառապէի աշխարհի ամէն իրերէն, որոնք քեզ կը շրջապատէին։ Կը նախանձէի ու կը տառապէի։

Քմահաճոյքներդ քաղցր էին երբ ինձի հետ ըլլայիր, բայց նախանձը զիս կը յուզէր, կուրծքս կը ճնշէր երբ ուրիշին կը ժպտէիր։

Անո՛ւշ, երիտասարդի մը չէ՛, այլ նոյն իսկ ընկերուհիներուդ, որովհետեւ սիրտս նախանձով ու վախով լեցուի էր, քու մը պիտներդ իմ սեփականութիւնս կը համարէի և կը տառապէի երբ անկէ կը գողնայիր ուրիշին տալու համար։

Սիրատարի էիր, պաշտելի՛ս, գիշերի ժամերուն մինչ ուրիշներ կը ննջէին հանդարտիկ, դուն արթուն էիր։ Գիշերի լուսթեան մէջ, լուսնկային տեսքին հանդէպ քուրայ սիրտիդ զովութիւն տալ կ'ուզէիր։ Կը սիրէի պտալիլ այդպէս լուիկ ու մնջիկ, սակայն նախանձը օրէ օր սիրտիս տէրը կը դառնար, ու վախնալով թէ օտար սէրեր քեզի կը խօսին լուիկ, կը նախանձէի գիշերէն և լուսնկայէն։

Անո՛ւշ, հոգիս կը տառապէր նախանձէն։ Երբ կը յիշե՞ս օր մը մեր մենութեան վայրկեանին մէջ ըսի քեզի։ Անո՛ւշ, թո՛ղ աչքերդ կուրնան աշխարհի առարկաները չտեսնելու համար։ Որովհետեւ հոն շատ գեղեցիկներ կան և ես անկարող եմ զանոնք գերազանցիլ։ Թո՛ղ ականջներդ խուլնան, որովհետեւ բնութեան ձայներուն մէջ իմ մեղամաղձոտ շեշտերէս աւելի անուշներ կան։ . . . Ո՛հ, ինչպէս բացատրեմ սիրտս, նախանձը կ'ուռի, կը յուզուի ներսս . . . կը վախնամ Անո՛ւշ, աղջիկ էք . . .

Անո՛ւշ, քեզ աշխարհի ամենէն տգեղը կ'ուզեմ տեսնել, և քու վրայ միշտ նախատինք լսել։ Քու գեղեցկութիւնդ հոգիս վախով կը լեցնէ, քու ներքողներդ սիրտս նախանձի մէջ կը տապկեն։ Քեզի սոսկ ես կ'ուզեմ ուշադրութիւն ընել և էութիւնդ մինակ ինձի վերապահել։ Սէրդ զիս սոսկ կալի յուստես մը ըրաւ։

Քաղցր է՞ ինձ չքաւորութեան տառապանքը։ Քեզ խուլ ու կոյր տեսնելու ցաւը, քան ուրիշի ներքողին առարկան տեսնել քեզ ու կուրծքիս տակ զգալ նախանձին սրտմաշուքը։

Ժամանակդ եկած է, հասուկ ես, Անո՛ւշ, ուրիշին սիրականն ըլլալուդ գաղափարը, սէրդ ստակով ու զարդերով ծախուելուն վախը կը մեռցնէ զիս։

Ապագային քու պղտիկներուդ երեւակայական տեսքը, որոնց վրայ իմ դէմքիս

գիծերէն ընաւ չպիտի գտնուին, այն անգութ փայտայանքը, զոր ուրիշէ մը պիտի ընդունիս ու այն ժպիտները, որոնք պիտի շուայլեա, անգո՛ւթ, օտարի մը, զիս կը խելագարեն:

* * *

Նախանձն հոգիին անունդն է հիմա, վախն ու սարսափը նախանձին ընկերները, որոնք կը լեցնեն սիրտս: Եկո՛ւր, Անո՛ւշ, այս կեանքը տառապանք մըն է. եկո՛ւր միասին գոցինք իրարու արտեանունքներ. յաւիտենական քունը անուշ է, եկո՛ւր գիրկընդխառն թաղուինք անոր մէջ, անէանանք իրարու մէջ . . .

* * *

Ո՛հ, սէրը երգը ծնաւ հոգիին տենչը յագեցնելու համար, երգը նախանձը՝ զայն խռովելու համար . . .

Կը սիրեմ, ո՛հ, կը նախանձիմ:

ՄԱՆՆԻՈՆ

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Հաստատեալ 1805, Մերձան փողոց Թիւ 57
Տասնեկինգ չաբաթէն Անգլիերէն կամ ֆրանսերէն սահուն կերպով խօսիլ կը փափաքի՝ քննեցէ՛ք Մայքերշաֆթ սիսթեմը, որ կը բաղկանայ 15 տետրէ և գինն է 30 ղրշ:

Ա՛յ մի ըսէք թէ՛ ինչպէս սորվինք գերմաներէն, զի հրատարակուած է քերականը համառօտ խօսակցութեամբ, գին 2 ղրշ:

ԳՈՀԱՐՄԱՏԵՆԻԿ հայ տղոց, որ կը պարունակէ բարոյական գեղեցիկ պատմութիւններ, նկարագրութիւններ և տոհմային սովորութիւններ, պարեր ու խաղեր:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ տղոց տարիքին յարմարցուած միակ գիւրտոյց քերականութիւնն է պատկերներու վրայ սովորեցնող:

Գին Ա. մասին 50 փարա, Բ. մասին 100 իսկ Գ մասին 4 ղրուշ:

Կեդրոնատեղին է ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Մէրձան փողոց Թիւ 57

ԾԱՌԲԱՆԵՐԸ

Ընած մեծցած մեշ լեռներուն,
Օգը ծծող ջիւջ ու յսակ,
Ես ծաղիկներ ունիմ սիրուն,
Զոր պիտի՛ մեծեմ օսերուդ ճակ:

Ծաղիկներ փայլուն շքեղ
Նն գիներբուկ, «Մի՛ մոռնաւ զիս»:
Պննելու քու կուրծքիդ վառ գեղ
Ասո՛նք միայն ընտել հոգիս:

Անմոռուկը պակեւ աչքիդ
Թովիչ, փայլուն, ժպտող, սիրուն,
Յոյացրեմ զուարթ հոգիդ
Գիրգ ծոցին մէջ իր քերքերուն:

Դիներբուկը արիս պակեւ
Կարմիր եւ պարզ գոյն մը ունի.
Թոռմելու մօտ իրեն քերքեր
Սիրս ցուցնեն, ու կ'արիւնի:

Փունջն խառնուրդէն ալդ երկուքին
Խորհրդաւոր է արդարեւ,
Զի մէկ մասը է՛ իմ հոգին,
Իսկ միւսն՝ աչքերդ, հոգւոյս արեւ:

Ռշափ լուռ է քաղցր անհուն,
Երբ վառ աչքերդ կը պակեւն,
Տեղեւն արիս միշտ տոփուն,
Ու փրկեն զայն վառ կրակէն:

Տ. Կ. ՄԱՎԵԱՆ

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կը լսենք թէ Արեւելեան Ներկարուղիներու Ներհաշափական ու ձառ. տարապետական գծագրիչ Հայկ Էֆ. Գալեմսկերեան նշանուած է, նախընթաց կիրակի, Նաուր Գափուի Տեօվլեքեանց բնակարանին մէջ, Օր. Նշանուի Տեօվլեքեանի հետ, երկու կողմերու ազգական ու բարեկամներու ներկայութեամբ:

Հայկ Էֆ. Գալեմսկերեանի մտաւորական եւ բարոյական արժանիքները՝ ինչպէս նաեւ Օր. Տեօվլեքեանի գնահատելի ձիրքերը ծանօթ ըլլալով մօտէն նմազրութեամբ, այս նշ. անախտութիւնը կուգայ գրուական մը ըլլալ ընտանեկան գեղեցիկ բոյնի մը կազմաւորութեան, որուն համար արագին օրհնահաւորութիւններու հետ, կը փութանք մեր խնդակցութիւնները ուղղել համակրելի խօսեցեալներուն:

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Արմառու վանքին, կրօնի լա՛յն դաս, Ուրկէ վարդապետ կ'ելնէ բարեպաետ, Հայ եկեղեցւոյն ձօնուած իբր ընծայ Ո՛չ հնամենի եւ ո՛չ նորընծայ, Վարդապետք Տէր ծայրագոյն Մուշեղ Ուր իր գրչին պէս ճամբով կոր ու շեղ, Յոյցերու մէջ վառ, սիրոյ, յարգանաց, Շաբթուս Պօլիսէն մեկնեցաւ, զընա՛ց, եւ որուն ի մե՛ծ յարգանս ու պատիւ Մագրիկիւղի ջո՛ջ անձինք բազմաթիւ, Սարեցիին խնջոյք մ'ընէին, անընթաց, Նախընթաց գիտերն իր այս բաժանման, իբր Ասանայի Առաջնորդ, առաջ Անուշես քան ըզմեծ տօն Տեսաւընդառաջ, Պիտի առնէ կանգ քաղաքն ի Մերսին, Կիլիկիոյ մեր սուրբ Կարողիկոսին Տալիք հրահանգին համեմատ, ճամբան Փոխելու դէպ Սիս, ուրկէ անխափան Տրւի պիտ' անոր մի Կոնդակ, որով Սահակ Մրբազանն իր հայրագործ Օրհնենցներն անգլին ընծայէ պիտի, եւ դրնելէ ետք ծոցը զայն, անձի Չեռք առնէ պիտի վերսին ուղին Դէպ ի նոր իրեն պատշոնաւորին: Մաղթենք որ Ասուած, մե՛ծ պարգեւատու Այս երեսասարդ բայց կուռ, իմաստուն Մեր վարդապետին շնորհէ շարունակ Յաջողութիւններ մե՛ծ, բազմագունակ, Ռապսոդի հոսկէ մեր զըրջով աննենգ եւ անկողմնակալ, զինք զովասանենք:

Իրեն գործերով ծանօթ դուզնալեայ Կեօի փառայի քաղին առժամեայ Թաղական Խորհուրդն որ ի մեզ մեծ ցաւ Լրբեց իր պատշոնն եւ արդ քառուցաւ, Կ'ըսեն քէ նորէն փափաքով մ'անեղ Կուզէ մտնել իր քողած գործին մէջ, Մինչ աւագերեց Տէր Հայրը Ռսկի Չուզե՛ր որ ալ ան՝ գործին սողոսկի, եւ կը պատրաստէ ընտելեաց մի ցանկ Ուուն անուանենք, ինչպէս իմացանք, Կազմուած են լոկ տարրերէ հրմուս ժամուն, զբարոցին գործոց խելամուս:

Արաս չը բերած ցարդ իր անուան տուրջ Տէր Արիսակես վարդապետն այն լուրջ, Առաջնորդը փոխ՝ քաղին Խրնուսի Ուր ի Տրապիզոն կ'ապրէր մեկուսի, Նամակ մ'ուղղելով Ս. Պատրիարքին Աղաչանքներով մե՛ծ, պաղատագին, Կը խնդրէ որ զինք արտօնէ գալ հոս Քանգի մարմինով չէ այնքան *խաչոս*, եւ չուզէր մարմնոյն հանդէպ՝ ապերախ Մընալ եւ ուսի չի բուծել իր խոս:

Կեանքովն ու մտնովն իր ոսին, անպէս Նորընծայ տէրտէրն այն մեր Կարապետ Ուր քափառելի ետք աւա՛ղ, հոս, հոն, Իբրեւ հոգեւոր հովիւ, Կիրասոն, Պատշոն կը վարէր վերջերս ապօրէն, Դասապարտելի եղած է նորէն, Քանգի իրեն սուրբ կոչման հակառակ Ընթացներ գործած է հոն, անառակ, եւ ամեն զիտեր, երջուհեաց ի լուր Դիմած է քատոն, հանոյով մ'անլուր, Քահանայական սրբեմովն իրեն, Մինչ նոյն ժամերուն անուշես կը նիրհէն, Իւ կարգակիցներն աշխարհիս համալ թէ՛ երեսասարդ, քէ՛ կորաբամակ:

Ծանօթ՝ գրասիրտ կանանց աշխարհին, Իբրանոսեանց տան՝ ձիկին Մաքրուհին, Ուր լուռ եւ անձայն, բոլոր աղբասաց Կը բանայ քաւին իր սրտով զըրած Այս անգամ նորէն պարգած իր քեւեր Ընծայեց շրբեղ իբր անգին նուր, Խաւքիւղի ազնիւ որբուհեաց համես Մի հարսանեկան ծանրագին ըզգես, Առ որ՝ սանուհիք այլ Ուրբանցին, երկար տարիներ իրեն մաղթեցին:

ԼՐԱԳՈՂ ՉԱՅՆԱԻՈՐԵԱՆ

Արտօնաւոր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԸՆԱՆ

Պապ-Ալի հասցետի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՊԵՐՁԵԸ ԻՆՍԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՔԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Հանամ, Թօփաղեան Խան

Սոյն վաճառատուներ, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տու-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ժանութեամբ շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-
գուստներու, Կանանց թէրթիկներու և
աղայոց չիք և գիմացկուն փոքրիւներու
նոյն մթերք մը պատրաստ ունի, որ
ջերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից .


Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

Կ. ՆԱՎՐՈՒԵԱՆ, Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՒԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ




ՆԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, ՊահճեԳափու, Ճեյալ-Պեյ խան, քի. 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ

Վ Ա Ճ Ա Պ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳՍՐԱՆԱՑ ԵՒ ՊԵՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Ա Բ Ա Ր

Ֆոնոկրաֆի Է. Գլաններու. Կրամֆոնի
Է. Էրկկոլմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքիբ
Էֆենտիի կից, Եալտըզ խանի տակ
քի. 2: Մասնաճիւղ Պահճե Գաբու.
քի. 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանայ սո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
շահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և Էրկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանայ հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել
կեդրոնատեղին: